


234

IV 2



ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 ֆր.
Տեղատվւոյ 6 «

ԱՐՏԱՍԱՀԱՐԱՆ
2 քիւ մէկ ծրարով)
Տարեկան 14 ֆր.
Տեղատվւոյ 7 ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 տր.
Տեղատվւոյ 1.50 »

Կ Ա Ն Խ Ի Կ

Մանուցման տողը
20 սանթիմ



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐ ՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՅՏԻ

Rédaction du journal

„Iravounk“

VARN A (Bulgarie)

—o—

Редакция

на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА (България)

—o—

Գրութիւնք եւ
չեն տրուիր

ԻՐԱՆԻՆՔԻ

ԵՐԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԵՇՐԶԱՆԸ

1902

Իրաւունք Պուլկարիոյ, ինչպէս և արտասահմանի խելահաս ու յառաջդիմաւոր հայ տարրին համակրութեամբ շրջապատուած՝ բոլորեց իր վեցերորդ տարեշրջանը և կը թեւակոխէ եօթներորդին մէջ. ուր վստահ ենք թէ միեւնոյն ժողովրդակաճութիւնը վայելելու բազմաթիւ թիւեր պիտի ունենայ:

Յարգ մեր բուն նպատակը եղած է հայ ժողովուրդի շահերը պաշտպանել, և կուսակցական ու անձնական նկատումներէ բոլորովին ազատ, ազգագրութեամբ ձեռնարկները ջատագովել, իսկ պարսաւել ինչ որ վնասակար է ազգային շահերուն և հայրենիքի սուրբ դատին յաջողութեանը. Իրաւունք ոչ մէկ կուսակցութեան, ոչ մէկ մասնաւոր շրջանակի հետ կապ չունենալով, իբրեւ անկախ քերթ՝ ազգին օգտին տեւակէտով կը զննէ ու կը դատէ նման խօսք ու գործ. ճիշդ այս պատճառաւ երբեմն աս ու ան կողմէն իրեն դէմ ելած յարձակումները առ ոչինչ նկատելով, Իրաւունք ինքզինք զօրաւոր կը զգայ իր անկախ ու զինն մէջ յարատեւելու և յամառօքն պաշտպանելու միայն ու միայն ազգային շահերը, որուն համար՝ իր օգտութեան իբրեւ էական մէկ պայմանը՝ չպիտի թերանայ իր քննադատի դերին մէջ, զի առանց տոտր իր գոյութիւնը մասամբ աննպատակ պիտի ըլլար:

Իրաւունք սկիզբէն ի վեր յեղափոխութեան համակիր, ջանադատ է ու պիտի ջանայ մեր յեղափոխական պատմութեամբ ու ժողովուն միացումին սատարել իր միջոցներուն ներսէն չափով, անկեղծ միութեանակները քաջալերել, իսկ կեղծիքը կամ կուսակցամոլ ու եսասէր յեղափոխականները դիմակալուելով ընել:

Թեւթիս պարունակութիւնը այս նոր տարեշրջանին մէջ աւելի հետաքրքրական ու շահեկան ընծայելու համար մեր ձեռք առած միջոցներով կը վստահացնենք մեր ընթերցողները թէ՛ Իրաւունք ազգային և քաղաքական յոգեւորներ պարունակելէ զատ, մեր ապրած երկրին, Պուլկարիոյ, արտաքին ու ներքին քաղաքականութիւնը և լուրերու ամփոփումը պատկերացնող շարաթական թղթակցութիւններ միշտ պիտի ունենայ Պոֆիայի իր մասնաւոր թղթակցէն, որուն ցարդ տրուած տեղեկութիւնները ցնահատուած են արդէն: Ազգային լուրերու մասին արդէն լայն տեղ մը տուած ենք և ալ աւելին պիտի ընենք: Նոյն «Այլ եւ այլ»-ի սիւնակով մը գիտական, անտեսական և ուրիշ արտակարգ և շահեկան լուրեր ու տեղեկութիւններ պիտի տանք: Եւ արդարեւ կարեւոր թերթերու կամ մեծ քաղաքացիներու կազմիքներ թարգմանաբար պիտի արտատպենք: Եւ այս բոլորին տեղ տալու համար պիտի խորշինք հակառակադասութեանց մէջ մտնելէ և մեզ դէմ եղած յարձակումներու պատասխանելէ:

Իրաւունքի չորրորդ երեսը կրկին միայն տաճկերէն քաղաքական լուրերու յատկացուած պիտի ըլլայ. իսկ շարաթը անգամ մը «Թիւճ. ճարիյէ»-ի սիւնակ մը պիտի ունենայ, որ շատ կարեւոր է մեր բնութեանը մեծագոյն մասին որոնք առեւտրական ասպարէզին մէջ են:

Իրաւունքի բաժանորդագրութեան պայմանները անփոփոխ կը մը նան: Եւ կը շարունակենք թերթ զրկել նախորդ տարու ընթացքով թանորդներուն, որոնք վստահ ենք թէ բարեհաճութիւնը պիտի ունենան այս նոր շրջանին համար ալ իրենց բաժանորդագրութիւնը շարունակելու, որով զմեզ քաջալերած և Իրաւունքի գոյութիւնը եւ բան զեւս ապահոված պիտի ըլլան:

ՆԱԽ ՄԻԱՆԱԲ

Պատմոն հրատարակուող «Հայրենիք» թերթը իր 129 թիւով նախ Միաւնանք խօսքը տուած է «Իրաւունք»-ի բերանը, մինչ իրենք, Դաշնակցական պաշտօնական ու կէս պաշտօնական օսկանները, զէն ի ձեռին հայաստանի մէջ կը կռուին (թուղթի վրայ) իբրեւ «գործի մարդիկ». իսկ «Իրաւունք» և վեր. Հնչակեաններու օսկանները «խօսքի մարդիկ» անուանելով, բնորոշած ըլլալ կը կարծէ Դաշնակցականներու և միութեան կուսակցներու ուղղութիւնը:

Եւր մեն կողմ, հայրենիքի նը ուրիշական դատին յաջողութեանը համար անհրաժեշտ նկատուած է հայ ժողովուրդը բաժան բաժան ուժերու միացումը, և այս նպատակաւ ջանքեր կ'ընեն ու տարի նկէ ի վեր բանակցութիւններ կը կատարուին նոյն իսկ Դաշնակցութեան կողմէ, ցաւալի է որ «Հայրենիք» թերթը վերջուր կըսկսի միութեանը անկարելիութեան մէջ ձգելու ջանքեր ցոյց տուող յօդուածներ հրատարակել: Այդ թերթի խմբագիրը, Պր. Ա. Վառճան, որ Ամերիկայի Դաշնակցականներու ընդհ. ներկայացուցիչն է միանգամայն, իրեն հակամիութեանական յօդուածներուն բնաբան ընտրած է «փոխադարձ վստահութեան» խնդիրը:

Պր. Վառճանի հ. Յ. Դաշնակցութեան մէջ ունեցած ոչ աննշան դերքը ու ըր այսօրուան բանած ուղղութիւնը մեզ մտածել կուտան թէ՛ արդեօք Դաշնակցութիւնը ալ ներքնապէս հակամիութեանական է, ու մէկ կողմէ եւր միութեան համար բանակցութիւններ կը կատարէ, միւս կողմէ այդ միութիւնը անկարելի ընել կը ջանայ: Բայց ինչ որ ալ ըլլայ Դաշնակցութեան բուն միտքը, իր Ամերիկայի Դաշնակցացուցիչին բերանով հրապարակ նետուած այս վերջին վստահութեան խնդիրը սոսկալի կերպով զինքը հակասութեան մէջ կը ձգէ: Տարիներէ ի վեր միութեան համար բանակցութիւն կատարել

առանց վստահութեան խնդիրը յարոնջանելու, հայ ժողովուրդը այդ յոյսով օրօրել և այսօր երբ ալ ամեն խոշորագոյն հարկուած կը նկատուի, ելնել այնտեղակ առարկութիւն մը մէջտեղ բերել, որուն ծայրը գտնել կարելի չէ և որ մեր յեղափոխականներու մէջ արդէն բացուած խրատաւը աւելի ընդլայնելու բնութիւնը միայն ունի: Այժմ տեղի է հարցնել թէ այդ առարկութիւնը ինչու ժամանակին չեն ըրած, եթէ անկեղծ էին. ինչու իրենց վստահութիւնը չի գրաւող կուսակցութեան հետ միանալու բանակցութեան մտան ու զեւս կը շարունակեն այդ բանակցութիւնը: Պր. Վառճան վստահութիւն չուերքը ըսելով, պէտք է գրտնայ թէ, ամբողջ վեր. Հնչակեաններու մէջ վստահութեան չըլլալու բանը ի՞նչու, քան որ ասոնք բացարձակ յայտարարացնել թէ ասոյ իսկ ըրած վերջինը պատրաստ են գործէ քշուել ասպայման կերպով, զոչել ըրենց ասուել, օսկանը, ժաղգրը և այլն: Այս աստիճան առաջան զոչուել թանց առջեւ, «վստահութեան չուերք» ըսելով կարելի կը նշանակէ ըրենց վստահութեան ամբողջ հայուելուը ասպատակելու ասուանել:

Հայ ժողովուրդի այն էն մեծ գանգուածը, որ տարիներէ ի վեր միութեան գաղաղակէ, և որուն արձագանքը սղած է «Իրաւունք» եւս, բնաւ չպարտ սերէ ու է յեղափոխական կուսակցութեան որ այս կամ այն պատրուակաւ սկստը միութեան ձեռնարկը վերջացու: Եւ այս իսկ Դաշնակցականներ ծափացել վեր. Հնչակեաններու անպայման զոչուելութեանց պատրաստագրութիւնը: Իսկ հայ ժողովուրդը բոլոր մասերը, անընշան բացառութեամբ, պատրաստ են բոլորուելու Միացեալ յեղափոխականաց շուրջը: Բայց հակառակ պարագային լքուել երեւակայութեան աւելի սոսկալի պիտի ըլլայ, և պատասխանատուութիւնը պիտի ծանրանայ պատրուակ ստեղծող յեղափոխականաց վերայ, որոնք հայ յեղափոխութեան գերեզմանը իրենց ձեռքով բացած

ըլլալու դատակնիքը պիտի կրեն ճակատնուն վրայ:

Պ. Վառձեան կրտսէն աւել թէ՛ նախ գործը քննենք, երկրին պատ-
րաստ գործերէն մէկը թէ՛ գործը
ըրած կըլլանք եւ թէ՛ իրար կը
ճանչնանք: Մինք կը կարծենք
թէ՛ անշատ եւ հետեւաբար անուժ
գործունէութեանց դառն արդիւն-
քը ըստ բաւականին մեզ խրատած
է. միանալու համար զգացուած
պէտքն ալ այդ խրատին արդիւն-
քն է. իսկ անոր նպատակը ու-
ժեղ գործունէութիւնն յոյս առաջ
բերելն է: Անուժ ու տկար նոր
գործը մը տեսնելու առաջարկը ը-
նելով Պ. Վառձեան միութեան
բուն նպատակը անտեսել կը ձե-
ւացնէ:

Միացած ըլլալու համար չէ որ
միութիւն կը գոչենք, այլ հայ
ժողովուրդին անշատ ուժերը հա-
մախմբելու, զօրանալու համար է.
եւ այդ զօրութեամբ է որ պիտի
կրնանք արդիւնաւոր գործ մը տես-
նել: Այո՛, երկրին մէջ տեսնելիք
շատ գործեր կան, բայց առնել
Պ. Վառձեանի ըմբռնած գործերը
չեն. դորօրինակ, երեք հատ հրա-
ցան փոխադրելու համար հինգ
գիւղ աւերակ դարձնելու պատճառ
տալը գործել չէ, անխորհուրդ
քայլով մը կամ Գիւրիտ մը սպան-
նելու տաքարիւնութեամբ ամբողջ
հայ գիւղատու մը թշուառաց
նելու պատճառ ըլլալը ոճիւր է քան
թէ հայրենասիրութիւն. իսկ սահ-
մանադիւրին վրայ երկու հրացան
պայթեցնելով, քանի մը տասնեակ
հայերու մահուան պատճառ ըլլալը
իրը գործունէութիւն մատնանիչ
ընել ու ասով արտասահմանի հայ
ժողովուրդին խանդավառութիւնը
շահագործել եղնը չարաշահու-
թիւն է:

Ո՛չ, Պր. Վառձեան ո՛չ, երկ-
րին մէջ տեսնուելիք գործերը ա-
տոնք չեն: Եթէ այդ կերպով ըս-
կուած գործունէութիւնը ասկէ
վերջ ալ շարունակենք, դա պիտի
նշանակէ թէ անցեալի դառն փոր-
ձերէն երբեք խրատուած չենք:
Յուցամոլութիւն եւ յեղափոխու-
թիւն իրարու հետ պէտք չէ շփո-
թել:

Արդի մեր յեղափոխական կու-
սակցութիւնները գոյութիւն առ-
նելէ տալ ալ հայրենիքի այս ինչ
կամ այն ինչ կէտին վրայ յերօրի
եւ յերջանիկի նման հերոս խմբա-
պետներ կ'աւելնենք. այն
պիտիւն ունենանք եւ ասպաւ էզ
տուղբը բռնութիւնը եղած է ոչ
թէ յեղ- փոխական կոյժակերպու-
թիւնը որ դեռ գոյութիւն չունէր:
Ուստի նոր հերոսներուն ալ փառքը
ուղղակի իրենց կը պատկանի. ա-
նոնց գաղտնիները ոչ մէկ կուսակ-
ցութիւն խելու իրաւունք ունի:
Թեղ կուսակցութիւնները, իբր կազ-
մակերպութիւններ, եթէ գործ
տեսնել, փառք վայելել կուզեն,

լուրջ կազմակերպութեան մը վա-
յել շրջահայեաց, հեռատես եւ
ամփոփ ու կուռ ուժով պէտք է
գործել գիտնան: Իսկ այս պայ-
մանները լրացնելու համար, միեւ-
նոյն վեհ նպատակին գինուորադ-
րուած մարմինները իրենց ունե-
ցած նիւթական ու բարոյական
ուժերը ու փորձառութիւնը իրար
կցելով, միանալով միայն կրնան
անհամեմատելի կերպով մեզմէ շատ
զօրաւոր բանակաւորութեան դէմ
մաքառել:

Ուստի նախ միանանք:

Գուրպէր

ԻՆՈՒՆ ՄԱՐԴԸ

1897ին հանգուցեալ Չաքրեա-
նի զբաւ հետեւեալ յօդուածը ա-
ւելորդ չենք տեսնել հոս արտա-
տպել, իր բացատրութեանց ձե-
ւերուն առանց բարձրիկն համա-
կարծիք ըլլալու:

Գերագանցապէս յեղափոխական
այդ Լեւոն Մարտի զայրոյթի
փոփոխութեամբ կողովէ վառմանի
հակացած ձեւերով յեղափ. գոր-
ծունէութիւնները եւ միայն միու-
թեան մէջ կը տեսնէ հայրենիքի
Ս. Դատին յաջողութիւնը: Տես-
նենք ինչ կըսէ:

«Գիւրիտ, շատ Գիւրիտ կարծե-
ցին:

«Մեր գալուցի երախաները, յե-
ղափոխութեան արիւնոտ գաշտը՝
Բարիկի Ծան Վիլիկի կամ Լօն-
տոնը հայ Բարբր հանրապարտեղ-
ներու ծառին ու ծաղիկին տակ
հեշտանքի ու հաճոյքներու գոյու-
անքներ կարծեցին, լուրիս խա-
չելէն աւելի դիւրին մի արհեստ
կարծեցին, կարծեցին, կը կար-
ծեն եւ առկուրի պիտի կարծեն:

«Չիս ու Ճաբոնի մկննդու հա-
շիւը ճշգրտութեամբ հաշուող մեր
Արարիւնը եւ Բարիկի գոգառուն
չնդկեցութեան թիւը Ա. Բ. Գ. պէս
գիտցող մեր միջնախնայը ինչո՞ւ
դիւրին չը կարծէին եսեւ հայկա-
կան ազատութեան փորձիկ. շատ
փորձիկ մը ո՛չ շիւր:

«Ի՞նչ հուս. որք երթանք եւ ա-
նիրաւութեամբ քննադատենք մեր
տխտան յեղափոխականներու ա-
րարքներն, չէ՞ որ երեք հայ, ե-
րեք հատ բերդեր գրաւեցին, ե-
րեք գուռառի տիրեցին ու թուրք
բանակը լեղապատառ ծակէ ծակ
փախուցին:

«Կարծ, Պայազիտը ու Կարինը
առնողներ երեք հատ հայեր էին,
ասիկայ աշխարհ լսեց որ ամէն
մարդ գիտէ— Լօրիս Միլիթօֆ, Տ.
Ղուկասօֆ ու Լազարէֆ. միեւնոյն
գիւցապք՝ երեքներու երկրի տան-
ձը կրծողներու երեք ուրիշ զա-
ւակները՝ միթէ կարող չէին մի-
եւնոյն դերը կատարելու: Նազար
պէկ եւ իր աջ ու ձախ թիկնա-
պահ Նշան Կարապետեան եւ Ծը
մառն ինչո՞ւ չը կարծէին որ դիւ-
րին, շատ դիւրին է հայաստանը

ազատել ու անոր տիրապետելը:

«Ծրագրեր փայլուն էր, պէտք
էր վարպետ կերպով շահագործել.
Իտալիայի տանձը Եթովպիա ար-
ժէք ունի, Անգլիոյ տպածոյններն
ալ ճաճկաստան կրնայ հագնիլ.
Երեքներու ծրագրին ալ գտաւ իր
ապուշ յաճախորդներն ու Գիւր-
հար գնորդները հայ ժողովուրդը,
եւ ահա կըսկի հնչ- կ'ուն տօնա-
վաճառը, ճիշդ տասը տարի առ-
կուրանի կշիռը Հնչակի լեզուակին
յանձնած հնչեց ու հնչեց թրդ-
թէ ուսմանով ու մեղանէ գնդակ-
ներով: Սասունը փրկուեցաւ,
Արարիկը տղաւորութիւն առաւ,
Ուրֆա, Ակ, Մարտուն, Բին-
կեան, Կիւսարիա, Սեբաստիա,
Սուէրիան ու Չէօք-Մէրզիքն
ալ երջանիկ են այսօր եւ եռագիտ
Նազար պէկն ալ երկու ձեռքերը
կուրծքին վրայ դնելով կը պարծի
վաթած արիւններով ու ժողոված
գեղին սակիներով կամ լեզուադը-
րամներով:

«Հիշողեան երեքներու գտած յա-
ջողութիւնն ու ստացած փայլն ու
փառքը չէր կրնար ուրիշ երեքնե-
րու ետեւան չը շալտիլ եւ ախոր
ժակներ չը բանալ. վիլն ու զուր-
նան ծրարելու համար կտուր կը-
տար, կտուր մը պէտք էր եւ այդ
կտուրն անուան ալ եղաւ Գիւրշակ
իր պանծալի երեքներով— Արմէն
Գասպար, Առվախը եւ Հրաչեայ.
միշտ երեք, միշտ երեք, Երրոր-
դութիւնը կազմուած էր, միեւ-
նոյն հաւակներն սակայն տար-
բեր գոյեով սերկուած, Տրապի-
զոն, Վան եւ Օթօման բերդերն ալ
գրաւուեցան եւ այսօր բոլոր հա-
յաստանը ուները մեք տրամադ-
րութեան տակ:

«50,000 ուր, 160,000 դրակ եւ
2,500,000 թշուառ ու դժբաղդ
հայ ժողովուրդ մը:

«Էօրիս Միլիթօֆ, Տ. Ղուկասօֆ
եւ Լազարէֆ, այդ երեք հայ ա-
նուան հետ պէտք չէր տեսն մոռ-
նալ մեծն Ռուսոյ միջնախնայ շափ
շատ սոխտանները, լեղապատառներն
ու պէրտանքաւորը մանաւանդ
Էմբրաիլ ոսկիները որ անձրեւէն
շատ կը տեղաւորուէին տեղ, ամեն
մարդու առաջ:

«Հայ ժողովուրդ, դու այս տո-
ղբը կարգաւոր մի յուսահատիր.
յեղծունէները ձողկելով, պակասու-
թիւնները հարուածելով մեր նը-
պատակը չէ քեզ յուսահատեցնել,
այլ յիշեցնելով քեզ քու աչքի առ-
ջեւ կատարուածներն, կուզում ըզ-
քեզ զգուշացնել որ այլ ես ա-
ռանց գործիք գառնալու այս կար-
գի տօնքիշտու եւ միայն իրենց մո-
նածը ներկել ուղղող երեքներու,
ոսք երեսն, աչքը բանաս, դու
քու մէջդ միանաս եւ ուրիշ միու-
թեան արդիւնքը եղող արդարեւ
վատահերի ու պատկառելի ներկա-
յացուցիչ մտքով մը փարիս յե-
ղափոխական Ս. գործին, զի երա-
խաներուն կարծածին շափ դիւ-
րին չէ հայկական խնդիրը: Ըսած

ենք ու պիտի ըսենք տակաւին թէ
ի՞նչ պէտք է ընել, համարել եւ
պիտի տեսնեն:

Յ. Չաքրեան

ԲԱՆԱԳԱՆԱՆ

ԱՆՅՈՒՆՈՒՆ

ԳԵՐԱՆԱՆԱ ԱՆՍՏՐԻԱ ԵՒ ԵՒՐՈՊԱ

Վրէժէնի լեհ զպրոցականներուն եւ
Պէտզէնի Բրուսիական պատմական դո-
տարանին վճիռներուն գործը կըս-
պառնան ծանր հակահարուած մը ու-
նենալ Գերմանիոյ միջազգային կա-
ցութեան վրայ: Պիւրիտի մէջ բար-
կութիւնն յայտնի էր արդէն Լէմպեր-
կի եւ Գրաքովիոյ հակաբրուսիական
յոյցներուն առթիւ, եւ Ռայխտակին
մէջ փոս Պիւրիտի բանեցուցած լե-
զուէն դիտուեցաւ որ Գ. բանիս Ս-
ւաթիոյ դէմ բարկացած է աւելի քան
Ռուսիոյ դէմ: Մարին կառավարու-
թեան համար շատ մեղմ եւ սրբազեղ
յայտարարութիւններ ըրաւ, մինչ առ-
բաւական համարեցաւ Սւաթիոյ մէջ
լեհական խնդրոյն առթիւ ձեռք առ-
նուած միջոցները: Այս տարբեր ըն-
թացքն վերջն էր որ լեհ իշխան
Սարգիսիւքը, որ Լեհաստանի տարե-
գրութեանց մէջ պատմական անուն
մը կրէ, Վալիցիոյ սահմանային ժո-
ղովրդի մէջ ծայր բարձրացուց Բրու-
սոյ լեհերուն կացութեան դէմ: առ-
արիւր կառավարութիւնը չի կրցաւ ա-
ռաջքն առնել այս հարցապնդման եւ
ու փոս Պիւրիտ յայտնապէս բարկա-
ցաւ, եւ Վիւրիտի աւստրիական դեռ-
պանին ալ յայտնեց իր բարկութիւ-
նը, բայց Վիւրիտի կողմն ալ ետ
չմնաց, Վիւրիտի գիւրմաս դեսպանին
բացարար ըէ Վալիցիոյ Եւրոպա-
յան մարտադրան մէջ, սակի ունեցած
վաճառատուութիւնները չի քրտաւ ար-
գիւր, որովհետեւ այդ եւանդագիրն
երեսփ. ժողովը կերպով մը ինքնօրէն
է Վալիցիոյ մէջ, եւ աւստրիան ծէ-
րութեան երեսփոխաններու արտօնու-
թիւնը կարգի չէ կապուել, թէեւ իր
աշխատեցաւ վանիսաւ որ հարցապն-
դումը անգիւղ. չունենայ: Կարիցիոյ լեհ
ազնուականութիւնը վիւրիտի Դան-
լիւնի կարեւոր նեղակներէն մին է,
եւ կօրուխտաւոր կոմս, ազգաւ լեհ,
պաշտօնական եւ անձնական ազդեցու-
ցութիւններէ զերմ չէր կրնար ըլլալ
բնակաւապէս: Հարիւր տարիէ վերջ
այսպէս Լեհաստան դեռ կըզրազեցնէ
մըշակալային քաղաքականութիւնը:
Ջաբուրիս պատարիս Բրուսիոյ թա-
գաւոր Թրեսերիկ եւ աւստրիոյ կայս-
րուհի Սարիա Թերեզա, ինչպէս յայտ-
նի է, երեք կտորի վերածեցին զայն,
եւ կըքեցին անոր անցեալը: Բայց
անկէց ի վեր Լեհ մոռցած չեն իրենց
բնիկ լեզուի ու բնիկ դաստիարակու-
թիւնը, եւ Բրուսիոյ մէջ մանաւանդ
յաճախ խնդր հանած են քան Աւս-
տրիոյ եւ Ռուսիոյ մէջ: Պիւրիտ կէս
պաշտօնական զեկոյց մը հրատարա-
կելով հանդերձ խիստ լեզուով կա-
լիցիոյ եւ հետեւաբար Աւստրիոյ դէմ,
նոյն օրն իսկ դնաց տեսաւ աւստրիա-
կան դեսպանը, կոմս Սէօյէնիկ—Մա-
րիս կոմսը, եւ հետագրից վիւրիտի
գերման դեսպան Էօյէնպուրկ կոմ-
սին որ խիստ ոճով խօսի կուրիտ-
վաքի կոմսին հետ: Վիւրիտի դան-
լիսն ասկէ առաջ ալ վարժուած է լե-
զի դեղահատներ կուլ տալ Գերմա-
նիոյ ձեռնար եւ դարձեալ ինքզինք
չաւրել, բայց վերջապէս ղրաւնագի-
տական դէպք մէջ այս, որ Երրեակ

Զինակցութիւնը զօրացնելու բնու-
թիւնը չունի բնականաբար: Ռուսիոյ
մասին տարբեր, եւ աւստրիոյ մասին
ալ տարբեր լինող գործածուած ըլլա-
լու պարագան իսկ կը բաւէր մասնել
տալու Վիեննայի մէջ: Բայց ապակա-
շի նշանակէր թէ Երբեակին պատկա-
ռելի չէնքը, որուն չուքին տակ կապ
րի Եւրոպա երկար ժամանակէ ի վեր,
փլչելու վրայ ըլլայ վայրկեանէ վայր-
կեան: Պատմութիւնն այդպէս չի
վարորդի: Մեծ գրեթէ ինքնաբեր
զուն կը մնան ժամանակ մը՝ երբ ա-
ռոնց միջավայրին կենսական պայ-
մաններն ալ փոխուին: Երբեակ Զի-
նակցութեան մեղադրութիւն ժամա-
նակ անկարելի էր նախատեսել այն
միջավայրին զեպքերը որք պիտի գա-
յին ամալ մը ձգել աւստրիականա-
կան մտերմութեան վրայ: Դժուար է
հաւատալ թէ յարաբերութիւնը սի-
րալիր մնացած ըլլան Վիեննայի եւ
Վերլինի միջեւ, Վիւրլին զիտողու-
թիւններէն եւ գերման մաքսային
սակցոյցին առթիւ: Աւստրիոյ եւ
Մաճառտաւի Երեսփ. ժողովներուն
մէջ ըստմաներէն վերջը, ասոնց վը-
րայ աւելցնելով ֆրանքիտալական
համաձայնութիւնը, կարելի է այժ-
մէն ըսել թէ Երբեակն ոչ եւս մի-
ջավայրին կացութեան անկունաբարն
է: Իրաւ է որ Երբեակը չէ դադարած
եւ պիտի չդադրի եւրոպական հաւա-
սարկղաւթեան տարրերէն մին ըլ-
լալէ, բայց այլ եւս չունի իր առա-
ջին աղումապին հրապարակ կնքող-
ներուն համար, ոչ ալ հրեկմի մը լըճ-
ական արժէքն ու կարեւորութիւնը
միւս անբութեանց համար:

(Թան)

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Կարնոյ արկածախնդրուն ինը-
պատ կատարուած հանգանակու-
թեան քիչ չատ կարեւոր գումար.
ներով մասնակցած են հետեւեալ
ազգայինք:

Տեղաբ.	
» Գ. Ստաթիկեան	80
Կիւիւպէնկեան եւ Տաւատեան	60
» Մ. Ա. Փոփազեան	30
» Կ. Ե. Կ. Փոփազեան	30
» Բ. Սիւլալեան	20
» Յակոբ Մամլուան	20
» Ս. Բիւրտեան	20
» Ա. Յ. Սիւնպօղեան	20
» Ա. Բաշաճեան	20
» Յ. Ս. Թոսպեքեան	20
» Գ. Վարդանեան	20
» Ս. Կ. Տէմիրճեան	14
» Ս. Գաբրիէլեան	15
» Ս. Մարինեան	10
» Ա. Էսաբաշայեան	10
» Ա. Ուզունպօղոսեան	10
Եղբարք Յովհաննէսեան	10

Ասոնցմէ զատ արհեստաւոր եւ
խանութպան ազգայինք ալ իրենց
կարողութեան չափովը մասնակ-
ցութիւն ունեցած են: Բայց ցան-
կին մէջ ընդունալն փնտռելի ծա-
նօթ հարուստ Գ. Պարոնեանի ա.
նունը. միայն իգնատ Պարոնեան
մը 2 ֆր. տուած էր: Եւ ըսի իւ-
րովի: Արարհամ փաշա Երամեա-
նի տնայաւ գանձին մատակարա-
րը, Աւետիս Պարոնեան, իր զի-
զած տանեակ հազարաւոր ոսկի:

Ներք կրցած է ձգել անկարելի
ժառանգորդի մը, որ աղգային ու
բարեգործական ձեռնարկներէ
զատ եւ ոչ մէկ բանի մէջ ժյատ չէ:

Որբախնամի բաժնորդաց ցան-
կին մէջ ալ Պարոնեանը իր բա-
ցակայութեամբ կը փայլի. եւ
բնաւ չենք պիտի թէ ոչ բարե-
գործութեան մէջ իր արժանաւա-
յել տեղը գրաւած է:

Քանի մը շարաթ առաջ Որբա-
խնամի եւ այսօր ալ հանգանակու-
թեան ցանկը աչքէ անցուցած ա-
տենա, երբ Գ. Պարոնեան եւ ըն-
տանիքին բացակայութիւնը ուշա-
գրութեան ներկայացու, անմի-
ջապէս յիշելի նաեւ անցեալ տա-
րուան այն կազ ու կոխը որ թաղ.
խորհրդոյ եւ սուրիկէ-տօքթօրին
միջեւ ծագած եւ անխնայով պո-
սական ու պուլկարահայ միտոյր
զբաղեցուցած էր: Յիշելի սուրի-
կէ տօքթօրին գրչէն ելած ու թա-
կան սինակնոց «առւմի պէս» (.)
երկու խոշոր յաւելումները, ու
ընցմով այդ յաւելումապէս թե-
թեւապիլը, ով ինչ գիտէ ինչքե-
մահաճւրի գոհացում տալու նը-
պատակաւ, արգարացի կը ճըզ-
նէր Պարոնեանը, որ նմանեալն
յուն թաղման համար թաղ-կա-
նութեան վճարել չէր ուզեր. որս.
չիալ գումարը:

Այդ կոխին մէջ սուրիկէ-տօք-
թօրին եւ թաղ. խորհրդոյ կողմէ
ալ անկարելի վաշխառելն գերե-
րը ըմբռնած էինք. առաջինը հա-
ճոյսէր թեթեւութիւն մը իսկ
երկարագր հրեայ իւզլիսիէի մը յա-
տուկ իրենց զերբու մէջն էին:
Մեծ Նազովրեցիք քան դար ա-
ռաջ խարապան ի ձեռնի Տաճարէն
կ'արտաքսէր այս երկարագրին տե-
սակէն եղբունը ըսելով «Տուն իմ
տուն ալօթից կոչեսցի, բայց
դուք արարիք այս աւաղակոյց»:

Վերջապէս այդ երկու ըմբռնե-
րը իրենց մեծամարտէն քիչ վերջ
իրարու հետ պայքարեցան: Բայց
այդ շնորհիւ եկեղեցին իր հա-
սոյթէն կարեւոր կորուստ մ'ունե-
ցաւ. իսկ Պարոնեանը անշան վը-
ճարումով մը օձիքը ազատեց:
Մենամարտին հանդիսատես ժողո-
վարդին մէկ մասը գեռ կը կար-
ծէր թէ Պարոնեանը աղգային
տուրքերէ չի փոխելու արամա-
գրութիւններ ունեցած ըլլաւ, ա-
սոր Որբախնամին չի մասնակցելն
ալ սուրիկէ-Տօքթօրին խաբարը
խօշ ընել ուղեղուն կը վերագրուէր:
Բայց գոնէ կարնոյ արկածելոց
չի նպաստելուն ինչ պէտք է ը-
լած, երբ անդին գիշերային
զաւտիք մը դուրս չի տալու հա-
մար, մի ինչ անորակագի Գ. Գրու-
տի մէկ գաղ. ոսկի կը խոստա-
ցուի:

Գ.

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Պարնոյ երկրաշարժէն արեւ-
ծեալներուն նպաստամտոյց յանձ-
նածորովը Պէլսոյ մէջ 1500 ոսկե-
ւոյ չափ գումար մը հաւաքեց է:
Հանգանակութիւնը գեռ կը շա-
րունակուի:

—Այս օրերս քաղաքս մէջ Հո-
թեքաբան մը պիտի բացուի. եւ
կը լսենք թէ այդ ընթերցարանը
պիտի մկրտեն կոսակցականի մը
անունով: Մինչ ամեն կողմէ լսու-
քեր կըլլան կուսակցական ոգին
մարեմա, զարմանալի է որ վա-
նայի մէջ նոր ինքնոյ գոյն հրաշ-
ւոյներ կը գտնուին: Քանի մը
տարի առաջ Սիսական ընկեր-
ցարան մը սնէինք, այժմ նոր
բացուելիքին գոյքերուն մէկ կա-
րեւոր մասը կը կարծենք թէ այդ
ընկերցարանին կը վարաբերի,
արդ, ինչ հարկ կայ նոր անուն
մը փնտռելու, մանաւանդ կոսակ-
ցական անուն մը:

—Տեղւոյս Այդ վարժարանի
կացութեանը մօտէն տեղեակ ե-
լողներ լաւ գոյնեղով չեն ներկա-
յացներ զայն: Հոգաբարձունեցու
եւ թաղ. խորհրդոյ միջեւ արեւոյ
անհամաձայնութիւնը պատճառ ե-
ղած կերեւայ ատենապետին եւ ու-
րը անգամ մը հրաժարելուն:
Հոգաբարձութեան ատենապետը,
Տօք. վարդապետ կ'երեւայ թէ
չէր ըստեմ թէ Այդ վարժա-
րան մը վարելը բժշկութեան չափ
սուրբ արտեստ մըն է, եւ անկէ ա-
ւելի համբերատարութեան հ կամ-
քի ուժ կը պահանջէ: Տօքթօրը
լր հրաժարանով իւր ընկերներն
ալ կը վստեսցնէ, ինչ որ թաղա-
կանութեան օմեքս գործին ջատ լա-
կուցայ. ասոնց ալ փնտաւած էր.
այսինքն եկեղեցիին ու վարժարա-
նիս միանգամայն անպայման վա-
րը ըմբռն. ուղեղուն ամսական
կապալ, շուրջմանք դուրս ընել,
մասնաւոր մատնել վարժապետը,
հոգաբարձութեան կամքին հակա-
ռակ, պաշտօնի մէջ պօսել: Եւ
չենք գրտել, ազգային գործերը
ու վարժարանը այս վրձնակն մէջ,
ընչ երեսով վաղը երկազին եւ
ազգային տուրք հաւաքել պիտի
երեն:

—Երեսուցիւմայ Պատրիարք Ա-
մեն. Եւրոպիոյ Սրբապան ու
ժանրապէս հրաւերացած էր, այժմ
ապարհնած է:

—Նպաստեց Յանձնաժողովը ո-
րոշած էր վանայ, վարապայ որ-
բանցը վազել: Գոհարէի Որբա-
խնամ ընկերութիւնը, որ այդ
ոգրանոցին տաքիւն որոշ գու-
մար մը կը վճարէր, խիզարած է
Պատրիարքէն Յանձնաժողովի ո-
րոշման գործադրութիւնը յետա-
ձգել:

—Փրօփոտէնի (Ամերիկա) Հա-
յոհեաց Որբախնամ քնկերութիւ-
նը հանգէս մը կատարած է, ուր
220 տղար հանգանակուած է:

—Նոյնպէս փրօփոտէնի մէջ
Հնչակեան մասնաճիւղը դեկտ. 22
ին փայլուն հանգէս մը կատարե-
լով, 520 տղար հանգանակած է:

ՇԵՌՔԱՆԱԽԻՐ

Թաղ. խորհուրդս հրապարակա-
ւոր շնորհակալիքը կը յայտնէ Ռու-
մանիոյ եւ Սուրբապէ ալի աղին
ազգայնոց, որոնք տեղւոյս Այդ.
վարժարանի վերաշինութեան մը-
նացած պարտուց բանձման ինը-
պատ տեղի ունեցած հանգանա-
կութեան մասնակցեցան ձեռամբ
Արժ. Տէր Սարգիս Հայր Դարպ-
եանի:

Պատմք յարգանք

Ի գիմաց թաղ. խորհրդոյ
Ատենապետ Ատենապետ
Գաբրիէլեան Յ. Մ. Կոնստանտին
2 Յուլի 1902
վառնա

"ԱՌՅՍ" ԿՐԾԱՆԱԿԱՐԱՐՈՒՄԵՐ

Շնորհակալութեամբ ստացած
ենք այս թերթի սկիզբէն մինչեւ
5 թիւը. խմբագիրն է Տ. Մ.
Միսնասեան որ լաւ գրող մըն է:
Այս թերթը «Իր ընթերցողնե-
րուն զգացումները աղիւսացնել եւ
խորհուրդները լայնցունելու» նպա-
տակաւ լոյս կը տեսնէ, եւ ի մէջ
այլոց գիտական ընտիր յօդուած-
ներ կը պարունակէ: Գիտն ալ
չատ աժան է. տարեկան կէս տո-
ւար Ամերիկայի համար, իսկ ու-
րիշ տեղերու համար 3 ու կէս
ֆրանք:

Հասցէն՝ Մ. Միսնասեան
39 Ֆրանկ սթ. Դեկտրիկ Մաս.
(Երա գ'իւնի 8 ամերիկ)

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԻՔ

Ինչպէս այս շրջանակներու մէջ ե-
գիպանոցները շատ առատ է այս տա-
րի, Կանադայի մէջ ալ նմանը շտե-
նուած առատութեամբ ցորեն արտադ-
րուած է: Երկաթալէնոյ կայարաննե-
րուն լոյր միջնորդները, ցորենի
վաճառականներուն բոլոր ամբարանոց
ները լեցուած են. կառքեր չեն բա-
ւեր փոխադրութեան. երկարորոնե-
րը ամեն արածադրելի տեղ ցորեն կը
լեցնեն, նոյն իսկ կայարաններուն
շուրջը, եւ կըսուի թէ տակաւին հունձ-
քին կէսն է այդ:

Ֆր. Կոստի հանրապետութեան
նախագահը տարեկան 60000 ֆր. թո-
շակ կ'առնէ: Տնական պէտքերուն
համար ալ 50000 ֆր. զատ կը տրուի:
Ասոնցմէ դուրս, ազգին կողմէ ձրի
կըստանայ միւրջ. բանջար, միս,
լոյս. իսկ աղտոտ լայնքն ալ ձրի
կը լուսցունի:

Պանտոն Բարբար մը Կոստալոս
թագաւորին տրամադրութեան ներ-
քեւ դրաւ 200000 անդր. ոսկի, ար-
տօնելով որ թագաւորը իր ուզած
մարդաբնական նպատակին գործածէ
զայն: այս վեղջինը որոշեց է ապ.

գումարով թուրքաւարներու դարձանառու մը շինել անդիւր մէջ :

• պէրլինի մէջ ժամագործ մը , Բլէս անուն , բէվոլէրի հարուածով սպաննեց իր կինն եւ երեք զաւակները 7-9 տարեկան : Ոճրագործը յետոյ գնաւով մըն ալ իր զուգը խորտակեց :

• պէրլինի մէջ 12000 թոնո խոշոր ծածան ձուկ (սազան) սպանեցաւ կաղանդին օրը : Սովորութիւն է եղեր անպատճառ խաղեարով լեցուն ձուկ ուտել կաղանդին իրիկունը , սա աւանգութեան համեմատ թէ այս իրիկունը որչափ շատ խաղեարով ծածան ունեն տարին այնքան բարեխաղ կը լլայ քնդի :

• Ֆրանսացի մեծահարուստ Ս. Ռոպեր Լըպոտի երկու միլիոն ֆր. նուիրեց Շիքակոյի մէջ ֆրանսական ճարտարաբանութեան գլխաւոր մը հիմնելու համար :

• Լոնտոնի մէջ ամբողջ բնտանիքներ ծաղկախառով վարակուած են , եւ հետզհետէ ակտը կը ծաւալի անդիւր ուրիշ մեծ քաղաքներու մէջ ալ :

ՀԱՎԱՏԻՍՍԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

ԹԻԻՐԲԻԱ

Գարատաղ Բրէնսին Բեթրս պուրկա կիթմէսի Բուսիա իլէ Իթալիա արասընտա պիր իթիլաֆ հուսուլա կէթիբուպտէ , Ալպանիա իչիւն Գարատաղըն վէ իթալիա նըն էգվէտէն պէրու պէսլէտիբէրի թագսիմ արպուսընա պիր նէթիճէ վէրէպիլմէք մագսէտընէ համլ օլընըյօ : Ալպանիանըն օ Բօլտա թագսիմի հալինտէ , Թիւրքիանըն տիկէր գրթալարըն նէ կիպի թագսիմ օլաճաղը վագրթ կէօթէրէճէք տիր :

— Թիւրքիա վէ Եունանիսթան արասընտա թիճարէթ ահտնամէսի թանկիմ իտիլմէք իչիւն թիւրք հիւքիւմէթի թարաֆընտան կիւզէլ նիլէթ կէօթէրիլմէքտէ տիր պու իսէ Եունան հիւքիւմէթին տիրէն Եունանիսթանտան ժեօն Թիւրքիէրի վէ Մահմուտ բաշայը գօվմուշ օլմասընըն սէմէրէսի տիր : Թիճարէթ ահտնամէսի իչիւն պուստան էվլէլ գաթ' օլընմըշ օլան միւզէքէրթ Ենիսիտէն պաշլամըշ տըր :

— Մուշ ճիվարընտա Առաքելոց մանասքըտընա էրմէնի ֆէտաիլէր իլթիճա իթմիշ օլմաւընտան տօլայը , Մուշա կէլմիշ օլան Պիթիլիս վալիսի կէլէն հաֆթա Մագկերտ թ սրիգի իլէ Պիթիլիսէ ափտէի իթմիշ տիր ,

— Պաղտատա գատար իչիւն օլընտագ չըմէնտըքէր խաթթը իչիւն Ալման գումարանի սոր վէ Պապը Ալի պէյնիտէ էլան իթիլաֆ հասըլ օլմամըշ տըր : Գումարանեա հէր պիր քիլմէթիւս իւզէրիլէ հիւքիւմէթտէն էօտէնիլմէսի լազըմ կէլէն ազճէ իչիւն թէմիլնաթ թալէպ իթմիքտէ իսէտէ , Խազընէն պու մէսէլէնի տալի ֆաւըրէգիր օլաճաղը միւրէվլի տիր :

ՍԼՍՄԱՆԻԱ

Իմբերաթօր Վիլհէլմ Ենիսիտէն մինասիպէթի իլէ Աստրիա իմբերաթօրընա , Չարս վէ ինկիլիզ գրալընա թէպրիգ թէլէկրաֆիարը քէշիտէ իտուպ իթալիա գրալընա թէպրիգնամէ Եօլլամամըշ տըր : Իթալիանըն Ֆրանսա իլէ իթիլաֆ հասլ իթմէսի պուսնա սէպէպ տտօ օլընըյօր , վէ Ալմանիա իլէ իթալիա պէյնիտէ սօվազլըք հուսուլա կէլտիկի զաննիլաթտան տըր : — Բրուսիանըն մէճիլիսի մէպուսանը աշըլտը : Նապըր ֆոն Պիւլոպ իմբերաթօրըն նուլթընը օգուտը , Մէքքիւր նուլթգտա ալման հիւքիւմէթին Լիհ մէսէլէսընէ գարըն շէտիտ թէպալիլէր էլէ ալաճաղը պէյան օլընտը : Պու հալտէ մէսէլէ պէյիլէլէք կէօրիւնիյօր :

— Քէլա Բայխստուկտա Ֆոն Պիւլոպ Մ. Չէմպըրլէնին պիր նուլթգընա ճէվապ վէրմիշ օլմագ իւզրէ ֆրանգօրիւսա մուհարէպէսի էնա սընտա Ալմանիարըն վահշիլիլէր իճրա իթմիշ օլմասը իչիւն Չէմպըրլէնին սէօզիւնէ թէսիլիպ պէյան իթտի , վէ իբի տէվլէթ , ինկիլթէրա վէ Ալմանիա , պէյնիտէ տօսթլըք տէվամի տիր տէտի :

Ֆոն Պիւլոպ իթթիֆագը միւսսիլէսիյէ ալթֆը քէլամ իտէրէք , սնըն տահա ուզուն միւստէթ տէվամ իտէճէկիլին պէյանլէ , մէքքիւր իթթիֆագըն մագսէտի սուլ հըն իպպասը իչիւն օլտըլը վէ միւլթէթիլի տէվլէթլէրտէն հէր պիրի ալէր տէվլէթլէր իլէ տալի իթիլաֆ հասըլ իթմէյէ սէրպէսթ պուլընտըլընը սէօլլէտի : Պիւլօֆըն իչպոս նուլթը ալգըշլարլէ գապուլ օլընտը : Եանի իթալիա նըն Ֆրանսա իլէ պաղը խուսուտա իթթիֆագ իթմէսի իթթիֆագը միւսսիլէսիյին վիճուտ վէ շարթ լարընը իլալ իթմիշ օլմագ տէ մէք իսթէմիշ տիր :

ԹՐԱՆՍՎԱԼ

Բրէթօրիտոն կէլէն թէլէկրաֆիարա նապարէն , Ժէնէրալ Տէվէրին Նաթալ ինկիլիզ միւսթէմիլիգաթը իւզէրիլէ Եիւրիլէճէկի Պօէր մէնպաւարտան պիլտիրիլմիշ տիր :

— Լօտրա հարպիյէ նէվարէթի Ճէնուպի Աֆրիգա իչիւն պիր թարաֆտան Ենիսիտէն Զազըրլամագտա օլուպ , կէլէն բէրչէնպէ կիւնիւ պիր թագուր բիտտէ վաբօրա կիրմիշ տ'ր . բէգա Եարըն պաշգա պիր ալայ Եօլա չըգաճագ տըր :

Մ. ԱՍԵՐԻԿԱ

Կէլէճէք սէնէ Մ. Ամերիկանըն Սէն Լուի շէհրիտէ քիւշատ օլընտագ սէրկիլի ումուսի իտարէսի միւքէմէլ պիր տիւմէնի պալօն իսթիլա իտէնէ վէրիլմէք

իւզրէ 40000 ինկիլիզ լիւրալըք պիր միւսապէգա Էքրամիլէսի թէէսիս իթմիշ տիր :

— Ամերիկանըն Չիգակօ չէհրինտէքի գատրիլարա միւստա թագիպիլիք մէքթէպի գաւառաճագ տըր : Մէքքիւր մէքթէպ 32 սէնէտէն պէրու թէսիս օլընմըշ օլուպ , թէճրուպէլէրլէ ալաշըլմըշ քի գատընլար էյի ճէրիմ օլաւայօրլար . վէ պալտուտա ճէրահլըք իչիւն ալալ ուլամայօրլար :

ՉԻՆ

Չին իմբերաթօր վէ իմբերաթօրիցաւընըն սալը Կիւնիւ Բէքի . նէ Էվթիլէճէքլէրի մուգարրէր իտի : Ալիլէրի իսթիգալ իթմէք իչիւն բէք պէօլիւք սազըրլըզլար կէօրիլմիշ տիր . Բաօքիլի ֆուտան Բէքիլէ գատար սաքէր տիգիլմիշ . Բէքնտէ պիլթիւն իլէ . ճիլ վէ մէմուլար Սէմա վի Չըրտաթ նամ իպատէթիտէլէրիլմէյտանընա թէճէմիլ օլընուպ , իմբերաթօր վէ իմբերաթօրիցաւ . նըն կէշտիլէրի վագրթ Եերէ գատար գաբանուպ թէվպու իտէճէքլէրտի :

— Բէքիլէքի իուս էչիսի Մանչուրիա իչիւն գալէմէ ալընմիշ օլան ահտնամէի չին մուրախալարըն իմպալամասըն Թուն վար Լէ գատար միւստտէ վէրմիշ , էկէր պու միտտէթ զարֆընտա իմպալամագ իսէ Բուսիա միւսսէպալթընը քէսուպ , Մանչուրիա սուրէթի գալթիլէք գապթ իտէճէկիլին պիլտիրիլմիշ տիր : Ճաբոն , Ամերիկա վէ ինկիլթէրա ահտնամէի իմպալամագ իչիւն չին մուրախալարընա գուվլէթ վէրմէքտէ տիրլէր : Պու պապուէ Մ. Ամերիգա Ճաբոն իթթիլգաի հալ Բուսա գարըն մուսթիլէթ իթմէք վաւ իթմիշ տիր :

— Չին իմբերաթօր վէ իմբերաթօրիցաւըն Բէքիլէ Եէթիլմիշ լէր տիր : Իմբերաթօրիցաւ պիր ֆէրման նէչր իտուպ , էնէպի էլ չիլէրլէ միւսսէպալթըն տօսթանէյէ պաշլանըլաճաղընը վէ հէր պիր էնէպի թագալարըն ահտնամէլէր մուճիպ հոգուգ վէ սէրպէս տիրլէթի թանըլաճաղընա իլան իթմիշ :

— «Թայմզ»-ա վէրիլէն իսպալաթա կէօրէ , Չին իսթիլալընա վէ Պօքսէրլէրիլ զըլամընա տար թէշվիգճի Բուսիա օլտըլը ալալա չըլմըշ : Եանի իուս էլիսի Չին հիւքիւմէթիլին մուհաֆալա իթմէք գատի իլէ էվրօալըլարըն չին մէմալիքիտէն գօվմագ նասիահաթը վէրմիշ :

Շիմտի տալի պուլանըք սուտան պալըք ալլար կիպի , Մանչուրիայը գապթ իթմէք թէպալիլինտէ պուլընըյօր : Ֆագաթ Ճաբոն , ինկիլթէրա վէ Մ. Ամերիգա տէվլէթլէրի իսէ չիմտի Չին մուրախալարըն թէշվիգ իտուպ , Մանչուրիա ահտնամէսիլին թան

զիմիլի թէէլիլ իթտիլմէկէ չալը չըլօրլար :

Ա. Զ. Դ

«Իրաւունք»ի տպարանը գրաշար-աշակերտի մը պէտքը ունենալով , կը ծանուցանենք որ փափաքողը գրիմէ խմբագրութեանս , Նորեկին ըլլալիք վճարուած իր ընդունակութեան աստիճանէն կախում ունի :

«ԿԱՂԱՆԴՉԷՔ»

Պ. Վ. Գիւլիլիքեան «Կաղանդչէք» անունով տետրակ մը հրատարակած է 32 փոքրագիր երեսներով : Տետրակին պարունակութիւնն է ընտանեկան լեզուով հաճիլի ոտանաւորներ և «Կաղանդի գիւլիլը» խորագրով արձակ մը : Գիւլին է 40 սանթիմ . կը ծախուի Ա. Չարպահանէլեան գրատունը :

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ

ԿՍՄ

ՄԻՄՈՒՆԶ ՀԱՅԿԱԿԱՆ

Այս երգարանի Բ. տպագրութիւնն է որ այսօր լոյս տեսաւ , աւելի ճոխացած , բարեփոխուած եւ մաքուր թուղթի վրայ տպուած : Հակառակ գնոյն աժանութեանը , կը պարունակէ այն լուրեր հին եւ նոր ազգային երգերը որոնք ընտիր եղանակ ունին ու կիրգուին հայ ժողովուրդի ամեն դասակարգէն

Դին 1 Ձր .

Ատանալու համար բօստի ծախքը 10 սանդիմ պէտք է միտակը զրկել Իրաւունքի խմբագրութեան վառնա : Կը ծախուի նաեւ Գահրէի մէջ Վերգործակատար Տ. Կարապետ Երզնկացեանի խանութը , Ուստը (Ամերիկա) Տ. Յակոբ Յարադի , Չիքակօ Տ. Մ. Գ. արակաւուրեան եւ Ընկ . քով Պուգրէշ Տ. Ղազար Պոզոսեանի վաճառատունը , Քէօստէնէ Տ. Ղ. Ըն , նիկեանի քով :

ԿԸ ՓՆՏՈՒՄ

1896ի գաղթականութեան ժամանակէն ի վեր անյայտացող Դասըմ Փաշացի Կարապետ Պ. Դալֆանի ուր գտնուիլը գիտցող աղաքայիք թող հաճին խմբագրութեանս խմբանիլ : Յիշեալը երկայնահասակ , թխաղէմ , սեւ աչեայ երկաթագործ մըն է , որ 3 արի առաջ Աթէնք կը գտնուի Եղեր :

ԿՕՇԿԱԿԱՐ

Ճաշակաւոր և աղկուն կօշիկ հագնելու համար գիմիլ Ստեփան Խօրասանճեանի խանութը , փողոց Մուսալլա , Գիւնբըր խիստ չափաւոր են :



Одговорникъ Н. Драгулевъ

Печ. на Хр. Н. Войниковъ—Варна